Հաստատված է ՀՀ ԱԱՏՄ կառավարման խորհրդի
2022 թվականի հունվարի 25-ի N 03-Լ որոշմամբ

ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՉՈՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
☏ (374-10) 65-05-53 էլ. փոստ՝ info@hlib.am

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

2021 ԹՎԱԿԱՆԻ 4-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿ

ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) 2021 թվականի 4-րդ եռամսյակի գործունեության կատարողականի գնահատումն իրականացվել է՝ հիմք ընդունելով «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածով սահմանված և ՀՀ կառավարության 2015 թվականի հունիսի 25-ի N 693-Ն որոշմամբ հաստատված չափորոշիչները և հաշվի առնելով Տեսչական մարմնի կառավարման խորհրդի 2019 թվականի հունիսի 11-ի N 03 որոշմամբ հաստատված «ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի գործունեության կատարողականի գնահատման մեթոդաբանությունը»:

1. ՆՊԱՏԱԿԻ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ

1.1 Տեսչական մարմնի գործունեության հիմնական նպատակին հասնելու մակարդակը.

	ՈԼՈՐՏ	ՑՈՒՑԱՆԻՇ (%)	
		4-րդ եռամսյակ, 2020թ.	**4-րդ եռամսյակ, 2021թ.**
1	**Դեղերի շրջանառություն**	3.5	1.0
2	**Բժշկական օգնություն և սպասարկում**	0	4.1
3	**Սանիտարահամաճարակային անվտանգության ապահովում**	0	2.7
4	**Աշխատանքային իրավունք**	2.8	1.1

*2020թ. 2 ոլորտում ստուգում չի իրականացվել:

1.2 Ոլորտի առավել ռիսկային բնագավառներում փոփոխությունների առկայությունը.

	ՈԼՈՐՏ	ՑՈՒՑԱՆԻՇ (%)	
		4-րդ եռամսյակ, 2020թ.	**4-րդ եռամսյակ, 2021թ.**
1	**Դեղերի շրջանառություն***	3.5	1.0

ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
☏ (374-10) 65-05-53 էլ. փոստ՝ info@hlib.am

2	**Բժշկական օգնություն և սպասարկում****	0	2.7
3	**Սանիտարահամաճարակային անվտանգության ապահովում**	0	2.7
4	**Աշխատանքային իրավունք**	3.4	1.1

1.3 Ռիսկերի պլանավորման, վերլուծության և գնահատման համար հատկացված ֆինանսական միջոցները և մարդկային ռեսուրսները[1].

Ռիսկի պլանավորման, վերլուծության և գնահատման համար հատկացված մարդկային ռեսուրսները ռիսկի գնահատման, ստուգումների պլանավորման և վերլուծությունների վարչության կադրային ներուժն է, իսկ ֆինանսական միջոցները՝ վերջիններիս աշխատավարձերը և խրախուսումները: Այլ լրացուցիչ ֆինանսական հատկացումներ տարվա ընթացքում չեն եղել:

Տեսչական մարմնի հաստիքացուցակով վարչությանը հատկացված է 9 հաստիք՝ 1 վարչության պետի, 7 գլխավոր մասնագետի և 1 առաջատար մասնագետի:

Ներկայումս թափուր են գլխավոր մասնագետի 3 հաստիքները, որոնց համալրումն ընթացքում է:

1.4 Խորհրդատվության, մեթոդական աջակցության և կանխարգելման միջոցների համար հատկացված ֆինանսական միջոցները և մարդկային ռեսուրսները.

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է 20333 իրազեկման միջոցառում (նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 10122 միջոցառման դիմաց), ըստ վերահսկողության ոլորտների՝

	Դեղերի շրջանառություն		**Բժշկական օգնություն և սպասարկում**		**Սանիտարահամաճ. անվտանգ. ապահովում**		**Աշխատանքային իրավունք**	
	2020 4-րդ եռ	**2021 4-րդ եռ**	**2020 4-րդ եռ**	**2021 4-րդ եռ**	**2020 4-րդ եռ**	**2021 4-րդ եռ**	**2020 4-րդ եռ**	**2021 4-րդ եռ**
Միջոցառումների թիվ*	**1428**	**1359**	**292**	**245**	**6075**	**13542**	**2327**	**4628**

** 559 միջոցառում ընդհանուր բնույթի է:*

[1] Այս չափորոշիչի համար հաշվետու ժամանակահատված է համարվում տարին:

ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
☏ (374-10) 65-05-53 էլ. փոստ՝ info@hlib.am

Այդ թվում՝

- 18 600 ստուգայց,
- Թեժ գծով ստացված 1579 զանգերին խորհրդատվություն և պարզաբանում,
- 154 հրապարակում պաշտոնական կայքէջի և ֆեյսբուքյան էջի միջոցով:

Միաժամանակ՝ իրականացվել է ՀՀ սահմանը հատած 495 785 անձի հսկողություն և խորհրդատվություն:

Խորհրդատվության, մեթոդական աջակցության և կանխարգելման միջոցառումներն իրականացվել են համապատասխան ոլորտային ստորաբաժանումների, ինչպես նաև իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների բաժնի աշխատակիցների միջոցով:

Խորհրդատվության, մեթոդական աջակցության և կանխարգելման միջոցների համար Տեսչական մարմնի կողմից ֆինանսական լրացուցիչ միջոցներ չեն հատկացվել:

1.5 Հայաստանի Հանրապետության կառավարությանը կամ համապատասխան ոլորտների քաղաքականություն մշակող պետական մարմիններին ներկայացված առաջարկների քանակը[2].

Հաշվետու ժամանակահատվածում ներկայացվել է 4 առաջարկություն: Միաժամանակ՝ քննարկվել և կարծիք է ներկայացվել տարբեր գերատեսչությունների կողմից մշակված 4 նորմատիվ իրավական ակտի նախագծի վերաբերյալ:

2. ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ

2.1 Ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների միջին տևողությունը.

Ըստ անհրաժեշտության ստուգումները բացառապես վերստուգումներ են՝ 30 վերստուգում, ընդհանուր միջին ցուցանիշը 13.8 օր է: Ըստ ոլորտների՝

		ՑՈՒՑԱՆԻՇ (օր)

[2] Այս չափորոշիչի համար հաշվետու ժամանակահատված է համարվում կիսամյակը:

ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
☏ (374-10) 65-05-53 էլ. փոստ՝ info@hlib.am

	ՈԼՈՐՏ	4-րդ եռամսյակ, 2020թ.	4-րդ եռամսյակ, 2021թ.
1	**Դեղերի շրջանառություն**	0	15
2	**Բժշկական օգնություն և սպասարկում**	0	14.9
3	**Սանիտարահամաճարակային անվտանգության ապահովում**	0	13.7
4	**Աշխատանքային իրավունք**	0	8.0

*2020թ. ըստ անհրաժեշտության ստուգում չի իրականացվել:

2.2 Բարձր ռիսկային տնտեսավարող սուբյեկտներում և ստուգման օբյեկտներում ստուգումների քանակը՝ ստուգումների ընդհանուր քանակի համեմատությամբ.

	ՈԼՈՐՏ	Ստուգումների ընդհանուր քանակ	Բարձր ռիսկ. ստուգումների քանակ
1	**Դեղերի շրջանառություն**	44	44 (100%)
2	**Բժշկական օգնություն և սպասարկում***	7	1 (14.3%)
3	**Սանիտարահամաճարակային անվտանգության ապահովում**	1	1 (100%)
4	**Աշխատանքային իրավունք**	9	9 (100%)

2.3 Ստուգումների տարեկան ծրագրում ընդգրկված ստուգումների միջին տևողությունը.

	ՈԼՈՐՏ	ՑՈՒՑԱՆԻՇ (օր)	
		4-րդ եռամսյակ, 2020թ.	4-րդ եռամսյակ, 2021թ.
1	**Դեղերի շրջանառություն**	13.5	13.8
2	**Բժշկական օգնություն և սպասարկում**	0	16.2
3	**Սանիտարահամաճարակային անվտանգության ապահովում**	0	23
4	**Աշխատանքային իրավունք**	10.6	14.8

Բժշկական օգնության և սպասարկման, ինչպես նաև սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման ոլորտներում բարձր ցուցանիշը պայմանավորված է մեկ խոշոր տնտեսավարող սուբյեկտում ստուգմամբ, որի ժամկետը երկարաձգվել է:

Բոլոր ոլորտների ստուգումների ընդհանուր միջին ցուցանիշը 14.5 օր է (վերստուգումների դեպքում՝ 13.8 օր):



2.4 Ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների ընդհանուր քանակի (որոնց շնորհիվ կանխվել է հանրությանը, շրջակա միջավայրին, ֆիզիկական կամ իրավաբանական անձանց գույքային շահերին, պետությանը սպառնացող էական վնաս կամ ռիսկ) հարաբերակցությունը ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների ընդհանուր քանակին.

Ըստ անհրաժեշտության ստուգումները բացառապես վերստուգումներ են՝ կարգադրագրով տրված առաջադրանքների կատարումը պարզելու նպատակով իրականացված ստուգումներ, ընդհանուր՝ 30 **վերստուգում**: Ավարտված 24 վերստուգումից **13 դեպքում** խախտումներ չեն հայտնաբերվել **(54.2%)՝** կատարվել են կարգադրագրվ տրված առաջադրանքները:

ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
☏ (374-10) 65-05-53 էլ. փոստ՝ info@hlib.am



2.5 Ստուգման ենթարկված օբյեկտների բավարարվածության աստիճանը Տեսչական մարմնի աշխատանքների անաչառությունից, ընթացակարգերի թափանցիկությունից, տեղեկատվության որակից և Տեսչական մարմնի ծառայողների արհեստավարժությունից.

Հաշվետու ժամանակահատվածում ստուգման ենթարկված տնտեսավարող սուբյեկտների կողմից լրացվել է Տեսչական մարմնի գործունեության գնահատման վերաբերյալ 31 հարցաթերթ, համաձայն որոնց՝ հարցաթերթում առկա հարցերի միավորների ընդհանուր գումարից՝ 90 միավոր, ստուգող անձինք գնահատվել են 85.9 միջին միավոր:

Ըստ առանձին գնահատման ենթակա հարցերի, պատկերը հետևյալն է.

	ՀԱՐՑԵՐ	ՄԻԱՎՈՐ
1	Որքանո՞վ էին ստուգում իրականացնող անձինք ներկայանալի:	9.7
2	Որքանո՞վ էին ստուգում իրականացնող անձինք բարեկիրթ և հարգալից:	9.9
3	Որքանո՞վ եք բավարարված աշխատանքների թափանցիկությունից՝ ստուգումից առաջ ներկայացվե՞ց ստուգման նպատակը, հիմքերը՝ ո՞ր իրավական ակտերի	9.6

ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
☏ (374-10) 65-05-53 էլ. փոստ՝ info@hlib.am

	հիման վրա է կատարվում ստուգումը:	
4	Բացատրվե՞ց թե ինչ է ստուգաթերթը, ինչպե՞ս է կատարվում վերջինիս լրացումը, յուրաքանչյուր հարցի գնահատումը, ինչո՞ւ է գնահատվում «այո» կամ «ոչ» կամ «չի պահանջվում»:	9.8
5	Ստուգման ընթացքում կատարվե՞ց խորհրդատվություն ստուգաթերթի՝ Ձեզ համար անհասկանալի հարցերի վերաբերյալ:	9.7
6	Խախտումների արձանագրման դեպքում ցուցաբերվե՞ց մեթոդական աջակցություն, թե ինպե՞ս ապահովել իրավական ակտերի պահանջների կատարումը:	9.5
7	Գնահատեք ստուգում իրականացնող անձանց արհեստավարժությունը՝ որքանո՞վ էին տիրապետում գործունեության ոլորտին:	9.8
8	Ինչպե՞ս եք գնահատում ստուգաթերթերի արդյունավետությունը՝ որպես օրենսդրության պահանջներին համապատասխանությանը նպաստող գործիք:	8.1
9	Որքանո՞վ էին ստուգում իրականացնող անձինք անաչառ և անկողմնակալ:	9.8

Առավել բարձր գնահատվել է ստուգող անձանց բարեկիրթ և հարգալից (Հարց 2-րդ)՝ 9.9 միջին միավոր:

Ինչպես նախորդ հաշվետու ժամանակահատվածներում, այս անգամ նույնպես համեմատաբար ցածր է գնահատվել ստուգաթերթերի արդյունավետությանը վերաբերող հարցը՝ 8.1 միջին միավոր (Հարց 8-րդ):

Տնտեսավարող սուբյեկտների կողմից ներկայացված առաջարկությունները հիմնականում վերաբերվում են օրենսդրական փոփոխությունների անհրաժեշտությանը, ինչպես նաև առավել հաճախակի իրազեկումների իրականացմանը:

Բացահայտված խնդիրներ և ռիսկեր.

ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
☏ (374-10) 65-05-53 էլ. փոստ՝ info@hlib.am

Հարցաթերթերի արդյունքների վերլուծությամբ պարզվել է, որ, թեև բոլոր հարցերի միջին գնահատականները բարձր են, սակայն որոշ հարցերի վերաբերյալ առկա են բացթողումներ:

Հարցաթերթով բացահայտվել է կարևոր խնդիր՝ ստուգում իրականացնող անձանց կողմից ստուգված հարցերը, այդ թվում՝ մեծածավալ փաստաթղթեր, ստուգվում են կրկնակի՝ վերստուգվում են Պատասխանատուի կողմից: Տնտեսավարող սուբյեկտները այդ հանգամանքը դիտարկում են որպես ստուգման Պատասխանատուի կողմից անվստահություն ստուգող խմբի անդամների նկատմամբ:

Նման գործելաոճը բեռ է տնտեսավարող սուբյեկտի համար, միաժամանակ՝ ստուգումն աննպատակ երկարում է՝ ծախսելով լրացուցիչ ռեսուրս, ժամանակ և միջոցներ:

Հաշվի առնելով հարցի կարևորությունը, Տեսչական մարմնի ղեկավարին գրություն է ուղարկվել՝ հարցը կարգավորելու նպատակով՝ պահպանելով տնտեսավարող սուբյեկտի և ստուգող անձանց վերաբերյալ տվյալների գաղտնիության սկզբունքը:

Տեսչական մարմնի ղեկավարի կողմից խնդրի կապակցությամբ ստուգում իրականացնող ստորաբաժանումների ղեկավարներին տրվել է համապատասխան հանձնարարական:

3. ԱՐԴՅՈՒՆՔԻ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ

3.1 Ստուգումների տարեկան ծրագրում ընդգրկված և ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների քանակական հարաբերակցությունը.

Տարեկան ծրագրի համաձայն իրականացված ստուգումներ՝ 60, ըստ անհրաժեշտության ստուգումներ՝ 30, բոլորը բացառապես վերստուգումներ են:

Հարաբերակցությունը 1 : 0.5 է:

ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
☏ (374-10) 65-05-53 էլ. փոստ՝ info@hlib.am



3.2 Տեսչական մարմնի վերահսկման երեքից հինգ բարձր ռիսկային բնագավառներում իրավիճակի փոփոխությունը[3] .

Չափորոշիչը գնահատվում է տարեկան կտրվածքով:

3.3 Ըստ առանձին ստուգման հատկացված ֆինանսական միջոցները և մարդկային ռեսուրսները.

	ՈԼՈՐՏ	ՑՈՒՑԱՆԻՇ (մարդկային ռեսուրսներ)	
		4-րդ եռամսյակ, 2020թ.	4-րդ եռամսյակ, 2021թ.
1	Դեղերի շրջանառություն	2.2	2.3
2	Բժշկական օգնություն և սպասարկում	0	3.3
3	Սանիտարահամաճարակային անվտանգության ապահովում	0	3
4	Աշխատանքային իրավունք	2.2	3.1

Բոլոր ոլորտների ստուգումների միջին ցուցանիշը 2.6 է:

[3] Այս չափորոշիչի համար հաշվետու ժամանակահատված է համարվում տարին:

ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
☏ (374-10) 65-05-53 էլ. փոստ՝ info@hlib.am



Ծախսված ֆինանսական միջոցներից հնարավոր է եղել հաշվարկել միայն գործուղումների ծախսերը, որը կազմել է 1 598 800 դրամ՝ 21 ստուգման համար:

Մեկ ստուգման համար ծախսված միջին գումարը կազմում է 76 133 դրամ: Ամենածախսատար գործուղումը կազմել է 315 000 դրամ: Որոշ դեպքերում խնդրահարույց են մարդկային ռեսուրսների հատկացումը և ֆինանսական ծախսերը. առկա են ստուգման չարդարացած տևողության դեպքեր, աննպատակ գործուղման (այլ տարածքային կենտրոնից) և գիշերակացի դեպքեր:



ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
☏ (374-10) 65-05-53 էլ. փոստ՝ info@hlib.am

3.4 Տեսչական մարմնի, Տեսչական մարմնի աշխատակիցների դեմ բերված դիմում-բողոքների քանակը և դրանց արդյունքները.

Տեսչական մարմնի դեմ բերվել է 100 բողոք, որից 51 բողոք՝ Տեսչական մարմին, 49 բողոք՝ դատարան: Ըստ վերահսկման առանձին ոլորտների, պատկերը հետևյալն է.

Ոլորտներ	Բողոքների ընդհանուր թիվ		Այդ թվում՝			
			Տեսչական մարմին		Դատարան	
	2020 4-րդ եռ	2021 4-րդ եռ	2020 4-րդ եռ	2021 4-րդ եռ	2020 4-րդ եռ	2021 4-րդ եռ
Դեղերի շրջանառություն	4	15	0	2	4	13
Բժշկական օգնություն և սպասարկում	3	21	2	14	1	7
Սանիտարահամաճարակային անվտանգության ապահովում	8	43	3	25	5	18
Աշխատանքային իրավունք	8	21	1	10	7	11
ԸՆԴԱՄԵՆԸ	**23**	**100**	**6**	**51**	**17**	**49**

Բողոքների թիվն աճել է՝ նախորդ տարվա միևնույն ժամանակահատվածի հետ համեմատությամբ:



ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
☏ (374-10) 65-05-53 էլ. փոստ՝ info@hlib.am

Տեսչական մարմին ներկայացված 51 բողոքից 11 բողոք բավարարվել է/բեկանվել է/փոխվել է տույժի միջոցը, 20 բողոք մերժվել է, 2 դեպքում բողոքարկման վարույթը կարճվել է դիմումի հիմքով, 2 դեպքում տրվել է պարզաբանում, 3 բողոք վերադարձվել է, 2 դեպքում բողոքին սահմանված կարգով ընթացք չի տրվել, իսկ 11 բողոքի քննումը դեռևս ընթացքում է:



Դատարան ներկայացված հայցադիմումների քննումը ընթացքում է:

Դատական կարգով բողոքարկված նախկին գործերի վերաբերյալ հաշվետու ժամանակահատվածում կայացվել է 14 վճիռ, որից 10 դեպքում՝ ի օգուտ բողոքաբերի: Ընդ որում՝ 14-ից 5 վճիռ կայացվել է վարչական (5 հայցադիմումներն էլ բավարարվել են), 5 վճիռ՝ վարչական վերաքննիչ (4 դեպքում մերժվել է Տեսչական մարմնի վերաքննիչ բողոքը, 1 դեպքում՝ բավարարվել է տնտեսավարողի վերաքննիչ բողոքը):

ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
☏ (374-10) 65-05-53 էլ. փոստ՝ info@hlib.am



Կայացված 2 վճիռները (բավարարված) վերաբերում են Տեսչական մարմնի աշխատողների կողմից դատական կարգով բողոքարկված կարգապահական տույժի գործերին:

ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
☏ (374-10) 65-05-53 էլ. փոստ՝ info@hlib.am